Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ

Երևանի ուղղիչ տունը:

Պարսպին մոտենալիս, մի փոքր նրանից մեկուսի, աչքիդ է ընկնում պարսկական հնամյա բերդի[1] հողե բուրգի կույչ եկած մի բեկոր՝ գորշ ու դեղին իր պատմության պես: Հողում կիսաթաղ մռայլ մի ներքնադուռ տանում է ո՛վ գիտե թե ուր: Պարսկական զնդանն է եղել այս տեղերը: Եվ ուղղիչ տանը կա նրա տխուր մնացորդը, մի տամուկ, խավար նկուղ, որի պատի մեջ, գետնին հավասար փուռի նման մի նեղ այր գնում է գետնի տակ, և դարձյալ չգիտես թե ուր… Ամեն ինչ մռայլ, անհայտ: Այդ այրն էին ներս քշում կալանավորին, որ փորսող տալով պիտի մտներ մեջը, պառկեր մնար, երկաթե ցանցով էլ ծածկում էին այրի բերանը և պատմությունը փակում: Թշվառականը դանդաղամահ մեռնում էր, անհետանում:

Հին պատմական Անհուշ բերդը…[2]:

Պարսկական այդ զնդանի վրա ցարական ռեժիմը «կուլտուրական» ուղղումներ է մտցրել, նկուղի վրա մի «մարդասիրական» օդանցք բանալով վերևից, որ նկուղում նստածը ավելի երկար ապրի:

Պարսկական զնդան, ցարական բանտ—սոցիալական պաշտպանության երկու սիստեմ, խանի պաշտպանությունն իր ճորտերից, ցարի պաշտպանությունն իր հպատակներից՝ էվոլյուցիոն կերպով իրար հաջորդել, իրար լրացրել են և ճնշման, մարդկային անձնավորության ստորացման, վրեժխնդրության որջերը, ռևոլյուցիոն կերպով տեղի են տվել մի արգելավայրի, որի անունն է ուղղիչ տուն և քաղաքականությունն՝ ուղղել աշխատանքի միջոցով:

Խորհրդային քաղաքացիների պաշտպանությունն իր զանցառու տարրերից— մեծամասնությունը փոքրամասնությունից: Ազատազրկումն և առանց կալանքի հարկադիր աշխատանքներ: Ուղղիչ աշխատանքի ներգործության միջոցներ, որ նպատակ ունեն կանխելու թե՛ հասարակության զանցառու տարրերի հանցագործությունները և թե՛ հանցագործի հետագա ոտնձգությունները: Նախկին բանտերի փոխարեն գյուղատնտեսական, արհեստավորական ու գործարանային գաղութներ: Ֆիզիկական տանջանքներ չպատճառել, չստորացնել մարդկային արժանապատվությունը: Ահա ուղղիչ քաղաքականության հիմունքները:

Դեռ շենքին չմոտեցած՝ ականջիդ հասնում են ներսի թխկոցներն ու չխկոցները: Հիշեցնում են «արհեստավորների շարքի» ձայները: Իսկապես էլ ուղղիչ տան արհեստանոցների մուրճի ռանդայի ձայնն է— ուղղիչ ձայնը: Եվ առաջին անգամ այցելողը, որ սատանան գիտե ինչ մեռելային լռություն է սպասում մռայլ պատերի մեջ, հանգստանում է և ականջը շարունակում պահել այդ ձայներին:

Բակը ներս մտնելիս վրադ են ուղղվում բազմաթիվ դեմքեր ու աչքեր: Մռայլ, անտարբեր, հետաքրքիր, անգամ ծիծաղկոտ: Կալանավորները ցրված են պատերի տակ, բակում, ծաղկոցում, զբոսնում են, խաղաղ զրուցում: Շենքի մի մասից մյուսն անդադար ելումուտ կա: Կալանավորների մի մասն ինչ-որ գործի հետ է: Դե, Ուղղիչ տունն էլ «տուն» է վերջապես իր օրվա հոգսերով: Տնտեսություն է՝ կերակրել, մաքրել, լվալ, թափել, արհեստ բանեցնել, պահեստները լցնել, դատարկել— մի խոսքով ապրել: Խոհանոց, փուռ (նոր է բացվում), կոոպերատիվ խանութ, վարսավիրանոց, բաղնիք, լվացքանոց, ընթերցարան, գրադարան, դասարան, սրահ-բեմ, այնուհետև արհեստանոցներ, այս ամենն իրենց տնտեսական դաստիարակչական և արտադրական աշխատանքներով աշխուժացնում են կալանավայրը:

Անցնում ենք քրեական կորպուսը: Մուտքի մոտերն է կոոպերատիվ խանութը, փուռը, որ համարյա պատրաստ է և կալանատան կարիքները բավարարելուց հետո Բանկոոպին տալու է օրական մոտ 150 փութ հաց: Ահա և վարսավիրանոցը: Մեկը սափրվում էրմյուսն սպասում էր հերթի: Երեքն էլ կալանավոր են: Ահա և կալանավոր խոհարարն իր օգնականներով կերակուր է եփում խոհանոցում: Մաքուր է չորս կողմը: Մեզ հրամցնում են այն օրվա կերակուրը: Բաղնիսը, 5—6 ավազանով: Թուրք

բաղնիսպանը ջերմեռանդ մաքրում է հատակը: Երկու շաբաթը մին պարտադիր է լողանալը, իսկ ավելին՝ կամավոր: Կուլտուրականացման ամենակարևոր հիմունքը: Անցնում ենք ծաղկանոց (այս տարի մշակած). ածուները գունավոր ձևերով կենդանացնում են բակի գորշ մակերեսը: Ննջարաններում շարված են Ուղղիչ տանը շինած երկաթե մահճակալները: Ներսը համարյա մարդ չկա, ամեն տեղ մի 4—5 հոգի: Միջանցքների պատերը զարդարված են կալանավորների յուղաներկ նկարներով: Կալանավոր նկարիչը հախուռն թափով տարված է ծովանկարչությամբ և նրա ծովերն ալեկոծ են:

Կուլտբաժնի վարիչ ընկեր Սահակյանը ձեռքը դնում է մի կալանավորի ուսին.

— Դու քանի՞ բանվորական օր ունես: Ասում է:

«Բանվորական օ՞ր»: Այո, դա Ուղղիչ տան արգոն է: Կալանավորն իր կալանքի ժամանակը կարճում է ինքը՝ արտադրական աշխատանք կատարելով, և նրա աշխատանքի երկու օրն ազատազրկման 3 օր է հաշվվում:

Կան ներսի և դրսի աշխատանքները: Կալանավորները գնում են քաղաք կամ գյուղերն աշխատում և որոշ ժամանակին վերադառնում «տուն»:

— Փախչե՞լ, գոնե իմ օրով չի պատահել,— բացատրում է ընկեր Սահակյանը,— փախուստ պատահել է ինձնից առաջ:

Կալանավայրի պետ ընկեր Չախմախչյանը բացատրում՝ է, որ դրսի աշխատանքի ուղարկելը մի տեսակ փորձ է նաև կալանավորի վարքի համար: Կալանավորի հետագա կյանքի և նրա ուղղվելու ամենաճիշտ նշանները երևում են հենց այդ դրսի աշխատանքի գնալուց:

Փախչում են ռեցիդիվիստները և այն էլ նրանք, որ ոչ տուն ունեն, ոչ տնտեսություն:

Ուղղիչ տան մտահոգության գլխավոր մասը կազմում ենաշխատավորական տարրերը: Սրանց հանցագործությունը կապված է կենցաղի, սովորույթների, նախապաշարումների և սոցիալական այլ գործոնների հետ, մեծագույն մասով արդյունք պատահականության, արտաքին պատճառների դժբախտ դրդման և ուրեմն ենթակա ուղղման՝ աշխատանքի միջոցով և սա Ուղղիչ տան քաղաքականության ամենահետաքրքրական, հիմնական կողմն է:

Աշխատավոր տարրը (մեծ մասամբ գյուղից) մտնում է ուղղիչ տուն և այնտեղից տանում է իր հետ այն ամենը, ինչ որ պետք են իրեն հետագա կյանքում: Ուղղիչ տունը բարձրացնում է նրա կուլտուրական մակարդակը, դաստիարակում է արհեստի կամ աշխատանքի միջոցով և ազատելիս կազմակերպում է հետագա կյանքի պայմանները: Ռեցիդիվի տեղ չի մնում այլևս, «դժբախտ» պատահմունքն էլ չի պատահի:

Մտանք արհեստանոցը: Հյուսնոցում աշխատում էին մի քանի հոգի: Վարպետ և աշակերտ: Նույնը և փականանոցում: Ջլապինդ կալանավոր վարպետը երկաթե ձողը դրել էր սալին, աշակերտները զարկում էին մուրճերով:

Արհեստանոցները տարի ու կես է որ հիմնվել են կալանավորների ձեռքով և աշխատանքով: Գյուղացի աշակերտներն արհեստ են սովորում, գլխավորապես հյուսնություն և փականագործություն: Լավ աշխատողներ են և նրանցից մեծ մասին սպասում է վաղաժամ ազատումն: Այս վաղաժամ ազատումը կախված է կալանավորի ազատազրկման ժամանակամիջոցի ամբողջ ընթացքից:

Աշխատել, «բանվորական օրերով» կարճել ազատազրկման ժամանակը, դուրսը և առհասարակ ձեռք բերել կատարյալ վստահություն և արժանանալ վաղաժամ ազատման, ահա կալանավորի հիմնական խնդիրը:

Ուղղիչ տունն ունի իր ներքին ինքնավարությունը և կազմակերպչական գործը: Ահա սխեման: Կուլտ-կրթական բաժին, դպրոցական բաժին (հայ, թուրք, ռուս):

Իրավաբանական բյուրո (իրավաբանական դասախոսություններ, իրավաբանական օգնություն): Ընկերական դատարան (քննիչ, դատախազ, ընկերական դատ—բեկման կետն Ուղղիչ տանպետն է): Սանիտարական բաժին (կուլտուրականներ, խոհանոց, վարսավիրանոց, բաղնիք, լվացարան, միջանցքների աշխատանք): Թատերական բաժին (հայ, ռուս, թուրք դրամատիկական— սեկցիա, երգեցիկ խումբ, կենդանի լրագիր, նկարչություն): Գրական սեկցիա (գրադարան, ընթերցարան, պատի լրագիր, կազմակերպություն):

Բարդ չէ և ոչ «թղթի վրա»: Կալանավորի համար մի բազմազբաղ գործ որով նա լցնում է իր հոգեկան պարապը և մոռանում «պատահմունքը»:

Գրադարանում մոտ 4000 կտոր գիրք կա: Գեղարվեստական և իրավաբանական գրքերն ավելի ժողովրդականություն ունեն: Մասամբ հասկանալի է…

— Դուք ո՞ր հոդվածով եք այստեղ,— դիմում եմ մի կարմիրբանակայինի: Ասում է: Չեմ հասկանում:— Ի՞նչ դժբախտություն էր…— Բանակայինը լավ չէր սովորում՝ ասացի «լուսդ քոռանա, ինչու չես սովորում»:

Մյուսը հեծգնդից է.— Կռիվ արի հնգորս հետ…— լավ, չէի՞ք իմանում որ չի կարելի— Խի՞ չէի իմանում, վեց տարի է ծառայում եմ: Ամա դե բան էր, էլա՛վ…

Ու չարաճճի աչքերը պսպղացնում է վրաս:

— Ընկերներ, դե՛ գիտեք, թե բանակը մեզ համար ինչ բարձր բան է…

— Բա կարծում եք նորից բանակը չե՞նք ընկնելու,— խոսում է առաջինը:— Էս անգամ ցույց կտանք թե ոնց ենք:

Ещё бы, կուլտ բաժնի պարետն է:

Բեմի վրա ենք: Դիմացը պատին կախած է մի մեծ նկար: Լենինի մահափորձի գունավոր վերանկարումն է: Շատ հետաքրքիր և ոչ անտաղանդ գործ: Յ. Բ.-ի հիշատակն է Ուղղիչ տանը: Այստեղ սովորեց և դառավ նկարիչ: Հիմա Լենինգրադումն է:

Շաբաթը մեկ անգամ ներկայացում, կոնցերտ լինում է:

— Ներկայացման համար շղթա էր պետք, քաղաքում չճարեցինք: Պատահաբար գտանք Նիկոլայի պադվալում,— ծիծաղում է մի կալանավոր:

Պատի թերթ: «Սանսեկցիայի պարտականությունը»: «ԱզգերիԼիգան»: «Մայիսի 1-ը և աշխատավոր գյուղացիությունը»: «Կորչի նոր պատերազմը»: «Բանտ և Ուղղիչ տուն»: «Մեր եղբայրական ողջույնը՝ կապիտալի բոլոր շղթայակիրներին»: «Մեր ներքին բացերից» Կարիկատուրա— «Գլուխս կորցրել եմ, գտնողին խնդրում եմ շուտ բերել հիվանդանոց: Գտնողին վաղօրոք շնորհակալություն» (սանսեկցիայի նախագահ):

Ընկեր Դեմիրճյան հանձն կառնեի՞ք երբեմն դասախոսել գրականության պատմության մասին:

Ցանկություն են հայտնում աշխատակցել «Խորհրդային Հայաստանին»:

Հիվանդանոցում 17 հոգի կար:

Թեթև մալարիա, գրիպպ:

1926—27-ին 326 հոգու անգրագիտությունը վերացված է: 1927—28-ին 136 անգրագետ կա միայն: (Թվերը տատանվում են, որովհետև կալանավորները շարունակ գալիս գնում են):

— Քրդերը լատինական այբուբենով սովորում են և տան հետ նամակագրություն սկսում: Շարունակ գիրք, տետրակ, մատիտ են պահանջում:

— Ուղղիչ տունն աչքներս բացեց:

Ես ստիպված եմ ընդհատելու Ուղղիչ տան նկարագրությունը, որ արժեր ավելի հիմնական նկարագրության: Խորհրդային օրն անցնում է իր կարգով, շտապ, և ժամանակ ու տեղ չկա բազմաթիվ նման հիմնարկների հետաքրքրական կողմերը նկարագրելու: Բազմաթիվ հարցեր, նվաճումներ, բացեր, պահանջներ՝ հախուռն գետի պես հոսում են և չես կարող հասցնել ժամանակ ամեն մեկի խորքը նայելու:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ

(Էջ 88)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1928, № 139: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Երևանի բերդը կառուցվել է 1582 թ.: Վերջին ավերակները վերացվեցին 1950-ական թթ.:

2 Անհուշ բերդ— հին բերդ Իրանի հարավ-արևմուտքում: Խուժաստան (Խուզեստան) նահանգի Դեզֆուլ քաղաքի մոտ: